ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Կրտսեր դպրոցականների բառապաշարի ակտիվացման միջոցներն ու ուղիները

Հետազոտող ուսուցիչներ՝ Անահիտ Օհանյան
Նարինե Խաչատրյան
Նազելի Սաղաթելյան
Ռայա Գալոյան
Վանաձորի Ս. Շահումյանի անվան թիվ 6 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Բառապաշարի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքի մեթոդիկա 5

Բառապաշարի ակտիվացում.....10

Եզրակացություն 15

Օգտագործված գրականություն.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բառը լեզվի կարևորագույն միավոր է, առարկայի, երևույթի հասկացության, զգացմունքների և այլ նշանակության, իմաստի կրողը։ Որքան հարուստ է մարդու բառամթերքը, այնքան ընդարձակ են նրա՝ մտքերը ճշգրիտ և արտահայտիչ արտահայտելու հնարավորությունները։

Բառերն իրենց հնչյունական կազմով և իմաստով մեր գիտակցության մեջ հանդես են գալիս իբրև օբյեկտիվ իրականության առարկաների ու երևույթների փոխարինողներ։ Այն ինչ մեզնից անկախ ու մեզնից դուրս գոյություն ունի իբրև իր, առարկա, երեկույթ և այլն, մեր գիտակցության մեջ հանդես է գալիս որպես այդ իրին, առարկային կամ երևույթին փոխարինող բառի նյութական իմաստ[1]։

«... բառն ամենուր է, ուր կա միտք, զգացմունք։Սակայն բառը պատահական միջոց չէ պատրաստի իմաստ արտահայտելու համար, ինչպես դատարկ բաժակը, որի մեջ կարելի է լցնել ցանկացած հեղուկ։Ամեն մի բառ մարդու աշխարհճանաչման ու ինքնաճանաչման ճանապարհին մի աստիճանիկ է, մարդկային կյանքի ու մտածողության զարգացման յուրահատուկ վկայություն ու դրսևորում[2]»։

Ժամանակակից հայոց լեզուն ունի հսկայածավալ բառային ֆոնդ։ Այդ բառապաշարի յուրացումը չի կարող տարերայնորեն իրականացվել։ Դպրոցում խոսքի զարգացման կարևորագույն խնդիրներից մեկը բառային աշխատանքի կարգավորել է, նրա հիմնական ուղղությունների առանձնացումն է և դրանց հիմնավորումը, դպրոցականների բառապաշարի հարստացման գործընթացի կառավարումը։

Տարրական դասարաններում բառապաշարի հարստացման ուղղությամբ աշխատանք էտարվում մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի վերլուծության ժամանակ։ Այս աշխատանքն իրականացնում է ընդամենը տեքստի մակարդակում։Սակայն կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի զարգացման մեթոդիկան նախատեսում է նաև հատուկ աշխատանք մի շարք ուղղություններով։

---

[1] Աղայան Է. Բ. Լեզվաբանության ներածություն «Դասագրք բուհերի համար», 3-րդ հրատարակություն, Եր, Միտք 1967, էջ 202

[2] Աբրահամյան Ս. Գ. «Հայոց լեզու բառ և խոսք», 2րդ հրատարակություն, 1986, էջ 5

Հետազոտության նպատակն է մշակել այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնք կօգնեն կրտսեր դպրոցականի բառապաշարի ակտիվացմանը։

Բառապաշարի հարստացումը խոսքի զարգացման մասնավոր խնդիրներից առաջինն է։

Բառապաշարի հարստացումը բացառիկ դեր ունի բանավոր խոսքի հարստացման գործում, որովհետև «օբյեկտիվ իրականության առարկաներն ու երեկույթները մեր գիտակցության սեփականությունն են դառնում հենց բառերի միջոցով»։

«Բառապաշարի հարստացումը մի անվերջ գործողություն է,որ սկսվում է երեխայի կողմից շրջապատի աշխարհը ճանաչելու և գիտակցորեն այն ընկալելու առաջին իսկ օրից և անդադրում կերպով շարունակվում է մինչև նրա կյանքի վերջը, որովհետև ճանաչումն ու ընկալումը հիմնականում տեղի են ունենում բառերի միջոցով»։[3]

Բառապաշարը խոսքի ողնուծուծն է, նրա սնունդը, էությունը, շինանյութը, առանց որի քերականությունը չի կարող աշխատել։Հայտնի են բառապաշարի հարստացման 3 հիմնական օջախներ՝ ընտանիք, հասարակական միջավայր և դպրոց։ Մինչև դպրոց ընդունվելը երեխաները առօրյա գործունեության և այլ բնույթի բառեր են սովորում ընտանիքից և հասարակական միջավայրից։ Հասկանալի է, որ բառապաշարի այդ օջախները անվերահսկելի ու անկազմակերպ բնագավառներ են, և երեխաները տարերայնորեն սերտում են բառնուբանը և դպրոց ընդունվելիս նույնությամբ հետները տանում։

Երրորդ օջախը դպրոցն է, որն արդեն պետականորեն կազմավորված հուսալի կրթավայր է, ուր պլանավորված եղանակով մշակվում ու վերահսկվում է երեխաների խոսքը։

[3] Տեր-Գրիգորյան Ա. Ե «Հայոց լեզվի մեթոդիկա Ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի համար», էջ 417 «Լույս » 1980թ.

ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԻԿԱ

Բառային աշխատանքի բոլոր ուղղությունները տարրական դասարաններում պետք է իրականացնել գործնական ճանապարհով՝ գլխավորապես հենվելով մայրենիի դասագրքերում զետեղված գեղարվեստական բնագրերի վրա՝առանց տեսական տեղեկություններ, սահմանումներ, քերականական եզրույթներ հաղորդելու։

Բառապաշարի մակարդակում խոսքի զարգացման մեթոդիկան նախատեսում է 4 հիմնական ուղղություն.

1. Բառապաշարի հարստացում
2. Բառապաշարի ճշտում, բառային - ոճաբանական աշխատանք
3. Բառապաշարի ակտիվացում
4. Ոչ գրական բառերի բացառում

Բառապաշարի հարստացում

Բառապաշարի հարստացումը նոր սովորողներին նախկինում անհայտ բառերի, ինչպես նաև այն բառերի նոր նշանակության յուրացում, որոնք կային բառապաշարում։ Կարելի է երեխայի բառապաշարում օրական 4-5 նոր բառ ավելացնել։ Բառապաշարի հարստացումը տեղի է ունենում առաջին հերթին խոսքային իրադրություններում, ապա նաև՝բացատրական ընթերցանության դասերի և արտադասարանային միջոցառումների ժամանակ։

Բառապաշարի ճշտում, բառային ոճաբանական աշխատանք, բառերի ճկունության, նրա ճշգրտության և արտահայտչականության զարգացում։

Այս խնդիրն իրականացվում է ենթատեքստի մեջ դրանց ընդգրկմամբ, այլ բառերի հետ համեմատման և պայմանավորված է նրանով, որ կրտսեր դպրոցականների խոսքում հաճախ բառերը կապված չեն երեւույթների ո առարկաների կոնկրետ պատկերացման հետ։ Հաշվի առնելով, որ կրտսեր դպրոցականները հաճախ օգտագործում են բառեր, որոնց իմաստը չեն հասկանում, այս խնդրի տակ մենք ներառում ենք նաեւ արդեն ծանոթ բառերի հասկացան շրջանակների ընդլայնումը,դրանց ամբողջացումը և խոսքում օգտագործելու կարողության զարգացումը։

Բառապաշարի ակտիվացումը որքան հնարավոր է շատ բառերի փոխանցումն է պասիվ բառապաշարից ակտիվ բառապաշար։Այդ նպատակին հասնելու համար աշակերտներին առաջարկվում է բառերն օգտագործել բառակապակցությունների, նախադասությունների մեջ, դրանք ներմուծել կարդացածը վերարտադրելու, զրույցի, պատմվածքի, փոխադրության և շարադրության մեջ։

Նոր բառը երեխայի ակտիվ բառապաշար պետք է թափանցի իրեն ծանոթ բառերի հետ համադրումով, որպեսզի նա դրանք անհրաժեշտության դեպքում կարողանա օգտագործել։Օր.՝ երեխաները մեծ հաճույքով և հասկանալով արտասանում են Պ.Խաչատրյանի բանաստեղծության հետևյալ տողերը.

«Երեկոյան, երբ մութն ընկավ,

Վար ու ցանքից հայրս եկավ,

Ուսին ամպի արցունք բերեց,

Ծիլ ու ծաղկի բուրմունք բերեց...»

սակայն եզակի երեխա է ծաղկից հոտ քաշելիս ասում. «ինչպիս՞ի բուրավետ ծաղիկ է ». լավագույն դեպքում երեխաները կասեն ՝ «Ի՞նչ անուշ հոտ ունի»։

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել բառերի նշանակության ճշգրտման վրա՝ հիմք ընդունելով հատկանիշների իմաստով մոտ բառերի հակադրումը, ինչպես նաևբառերի նրբերանգային նշանակության յուրացումը, բառապաշարի ճկունության զարգացումը, նորածանոթ բառերի օգտագործումը կապակցված խոսքում և այլն։

Ոչ գրական բառերի բացառում, դրանց աստիճանական «տեղափոխում» պասիվ բառապաշար.նկատի ունենք բարբառային, հասարակական արտահայտությունները, ժարգոնները,որոնք երեխաները յուրացրել են խոսքային միջավայրի ազդեցությամբ։ Սա մասնավորապես կարևոր աշխատանք է, երբ երեխաները գտնվում են ոչ բարենպաստ խոսքային միջավայրում։

Ուսուցման գործընթացում բառապաշարի հարստացման և կատարելագործման հիմնական աղբյուրը գեղարվեստական ստեղծագործություններն են, ուսումնական գրքերի բնագրերը,ուսուցչի խոսքը։ Այս ամենը լեզվի հարստացման ՝մանկավարժներն վերահսկվող և կազմակերպվող աղբյուրներ են ։

Բառային աշխատանքը բացատրական ընթերցանության մեթոդի կարևոր բաղադրիչներից մեկն է՝ ընթերցանության դասի կարևորագույն փուլը։

Մայրենիի դասերի խնդիրներից մեկը ՝ բառապաշարի հարստացումը, իրականանում է տարբեր եղանակներով: Հայոց լեզվի մեթոդիկայում հայտնի են նոր բառի նշանակության ուղղությամբ տարվող աշխատանքի բազմաթիվ հնարներ: Բոլոր հնարների օգտագործումն ապահովում է աշխատանքի բազմազանությունը, ինչպես նաև թույլ է տալիս նոր բառը ներմուծել, մասնավորապես տվյալ բառի համար առավել արդյունավետ միջոցներով:Ըստ զարգացնող հնարավորության աստիճանի դրանցից հիմնականներն են.

ա) անծանոթ բառի առանձնացում, բացատրում, իմաստավորում

Սա բառապաշարի հարստացման ակտիվ ձևն է:Այս խնդիրը իրականացվում է ինչպես անծանոթ բառի բացատրությունը դասագրքի համապատասխան էջի տողատակում տալով, այնպես էլ դասանյութի մեթոդական կառույցում դրանց շուրջ տարվող բառակազմական, բառաբարդման, վերլուծական, համադրական աշխատանքներով:

Օր.՝ Գտի՝ր և կարդա այն բառերը, որոնք օգնեցին քեզ հասկանալ, որ դասի հերոսը հայրենասեր է: Ասա այն բառերը, որոնք հուշում են, որ ձմեռ է: Ո՞ր բառերից հասկացար, որ դեպքը տեղի է ունեցել երեկոյան: Ուրիշ ի՞նչ բառեր կարող է օգտագործել Բեմբին իր երախտագիտությունը արտահայտելիս:

Եթե համակարգված ներկայացնենք, ապա կարելի է ներկայացնել բառերի բացատրության հետևյալ հնարները.

ա) Բառի բացատրությունը առարկա, առարկայի կամ երեկույթի նկարը ցույց տալու ճանապարհով. օրինակ ոսկե աշուն բառակապակցությունը բացատրվում է ՝ ոսկե աշուն պատկերող նկար ցույց տալով:

բ) բառերի համադրում այլ բառերի հետ. օրինակ՝բոցավառվում է (ի՞նչը)

գ) բառի ստուգարանում, որի ընթացքում դրանց բացատրությունը տրվում է բառակազմական վերլուծություն կատարելու ճանապարհով:

դ) բացատրվող բառի օգտագործումը բառակապակցությունների և նախադասությունների մեջ:

ե) բառի բացատրությունը իմաստով մոտ բառերի օգնությամբ

զ) բառի բացատրություն, դրանց իմաստային մեկնաբանությունների միջոցով

2. Բառերի օգտագործում բառակապակցությունների նախադասությունների մեջ:

Այս հնարը նպաստում է նորածանոթ բառերը խոսքում ըստ իմաստի ճիշտ օգտագործելու, այլ բառերի հետ կապակցությունների ստեղծելու կարողությունների ձևավորմանը։

3. Դասանյութերի մեջ եղած անծանոթ, նորածանոթ կամ այլ բառերի հոմանիշների, հականիշների թվարկում, դրանց օգտագործում խոսքում։

4. Բառերի համեմատում տարբերությունների բացահայտման նպատակով, որը տալիս է նույնանմանբառերի նշանակության սահմանազատման հնարավորություն (Օր.՝ արծաթյա - ածաթափայլ, անտառ - անտառապահ...)

5. Բացատրություն ենթատեքստի միջոցով։ Մեթոդիկայում բառիմաստի բացատրության այս եղանակը կոչվում է նաև բացատրություն կռահման ճանապարհով։

6.Նոր բառերի օգտագործումը բառակապակցության, նախադասության, իրենց իսկ կազմած բնագրում բառապաշարի հարստացման մի տարբերակ է, որի դեպքում պարզ է դառնում նաև, թե աշակերտները հասկանու՞մ են բառի իմաստը ըստ ամենայնի և կարող եննորածանոթ բառերն օգտագործել խոսքում՝ ըստ դրանց նրբերանգի։

7. Նոր բառի բացատրումը տեղեկատվական նյութերի միջոցով. բառարան, դասագրքի տողատակ, հավելված։

8. Առարկայի, նկարի, խրտվիլակի կամ գործողության ցուցադրումը որպես սովորողների ճանաչողական ակտիվության զարգացման միջոց կծառայի,եթե այդ գործընթացին դպրոցականները մասնակցում են ինքնուրույնաբար և ստեղծագործական։

9. Հականիշ զույգերի ընտրության հնար։

ժ) Մեկնաբանվող նկարագրություն, որը կազմված է բառերի, նախադասությունների խմբից։ Աշակերտները փորձում են ինքնուրույն խոսք կառուցել, բացատրել այս կամ այն բառի իմաստը ՝ օգտվելով գիտելիքների սեփական պաշարից։

ի) Տրամաբանական մեկնաբանությունը հաճախ օգնում է ոչ միայն բացահայտել բառի նշանակությունը, այլև ապահովում է դրա գիտակցորեն օգտագործումը խոսքում։

Բառերի բացատրման այս եղանակն աշակերտներին մղում է մտածելու, համեմատելու, համադրելու, հակադրելու, ընդհանրություններ կատարելու, դատողություններ անելու։ Աշակերտների խոսքի զարգացման գործում մեծ նշանակություն ունենասացվածքները, դարձվածքները, փոխաբերությունները, մակդիրները, այլաբանությունը...

ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ

Մարդու՝ ակտիվ, այսինքն խոսքի մեջ օգտագործվող բառաքանակը սովորաբար ավելի սահմանափակ է,քան այն բոլոր բառերի ծավալը, որոնց իմաստը հասկանում է: Մեթոդիկայում ակտիվացում նշանակում է բառի «տեղափոխում» պասիվ բառապաշարից ակտիվին: Բառային աշխատանքի հիմնական դերը յուրացրած բառերի առավելագույն ակտիվացումն է,խոսքում դրանց ճիշտ և տեղին օգտագործումը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 7-10 տարեկան երեխաների բառապաշարի միայն մի մասն է գտնվում ակտիվ վիճակում: Կրտսեր դպրոցականները խոսք կառուցելիս հաճախ չեն օգտագործում նույնիսկ այն բառերը, որոնց իմաստը հասկանում են ուսուցչի հանձնարարությամբ օգտագործում են բառակապակցությունների և նախադասությունների մեջ, սակայն ինքնուրույն խոսքում,առօրյայում չեն օգտագործվում: Քանի դեռ բառերը գտնվում են այդ «կարգավիճակում» նրանք երեխաների սեփականությունը չեն: Բառերը պասիվ բառապաշարից ակտիվը տեղափոխելու նպատակով պետք է տարվի հատուկ,պարբերական նպատակաուղղված աշխատանք :

Նշենք բառապաշարի ակտիվացման մի քանի ձևեր.

1.Առաջարկվող բառերի օգտագործում բառակապակցությունների մեջ

2. Տրված բառերի օգտագործումը նախադասություններում

3. Կարդացած բնագրին հարազատ պատմում՝ օգտագործելով բնօրինակի «գլխավոր» բառերը և դարձվածքները:

4.Դիտումների, նկարների շուրջ պատմում, տարաբնույթ գրավոր և բանավոր շարադրությունների հորինում՝ օգտագործելով հենակետային բառերը:

Բառապաշարի ակտիվացման ուղղությամբ տարվող համակարգված աշխատանքը պետք է ապահովի, որ բառը.

- ճիշտ ընկալվի բնագրում
- հասկանալի լինի իր բոլոր նրբերանգներով
- յուրացվի և մտնի աշակերտի ակտիվ բառապաշար
- անհրաժեշտության դեպքում վերարտադրվի սեփական խոսքային դրսևորումներում:

Դասի ժամանակ կարելի է կիրառել հետևյալ մեթոդը.

Գրատախտակին գծել գծապատկերը և լրացնել աշակերտների օգնությամբ։

Նորանծանոթ բառ	Բացատրություն	կիրառական	
		բառակապակցություն	նախադասություն
անմեռական	Անմահ հավերժական	Անմեռական ոգի	Հայ հերոսների անմեռական ոգին մեզ ուժ է տալիս
տրոհվել	բաժանվել	Սառույցը տրոհել	Արևի ջերմությունից սառույցը տրոհվեց մասերի

Կապակցված խոսքի զարգացման համար կիրառելի են Անավարտ նախադասությունները.

Ես տխուր եմ, երբ….

Ես տխուր եմ, որովհետև….

Ես տխուր եմ, իսկ…

2) Նպատակահարմար է կիրառել նաև« Բառերի արկղիկ» մեթոդը։ Դասարանի 2 անկյուններում դրվում արկղիկների, մեկի մեջ լցված են առարկա ցույց տվող բառերով քարտեր, մյուսի մեջ `հատկանիշ։Աշակերտները կամայական վերցնում են մեկ քարտ,գտնում իրեն համապատասխան զույգին, նրա հետ կազմում բառակապակցություն,որը օգտագործում են նախադասության մեջ։

3) «Բառարան» լեզվական խաղը հնարավորություն է տալիս պասիվ բառից ակտիվ տեղափոխել բառերի շարք, օգտվել բառարանից։

Օրինակ `դասանյութում հանդիպել է «չնաշխարհիկ» բառը. աշակերտները դիմում են բառարանի`

_ Սիրելի բառարան, ասա՛ ինձ «չնաշխարհիկ» բառի իմաստը։

Էկրանի վրա ուսուցիչը բացում է բացատրական բառարանի չ տառի էջը, որտեղից աշակերտները գտնում են նասում բացատրությունը, հոմանիշները,անպայման կազմում բառակապակցություններ, և կիրառում

նախադասությունների մեջ։ Նաև հիշեցնում է «բառարան» մեթոդական հնարը բառի ուղղագրական կանոնները.

4. Բառապաշարի հարստացմանը և կապակցված խոսքի զարգացմանը օժանդակում է «Ուղղորդված ընթերցանության» մեթոդը։ Աշակերտները տեքստն ընթերցում են ոչ թե ամբողջությամբ, այլ մաս-մաս՝ ըստ տրամաբանական ավարտների։ Յուրաքանչյուր հատված ընթերցելուց հետո ուղղորդող հարցերով վերլուծության են ենթարկում ընթերցվածը, կատարում կանխատեսումներ և մեկնաբանություններ՝ հենվելով տեքստի տառերի վրա։

Ճիշտ ընթերցանության արդյունքում աշակերտը հայտնաբերում է բառարվեստի նուրբ հնարներ, և ինքն էլ իր խոսքի վերարտադրման մեջ, համա պատասխան բառեր օգտագործելով, փորձում է հետաքրքիր մտքեր արտա հայտել: Այստեղ տեղին է հետևել Սենեկայի խորհրդին. «Եթե որևէ բան ընթերցում ես, յուրացրու գլխավոր միտքը։ Ընթերցելու ժամանակ այն, ինչ ձեռք է բերվում գրչի միջոցով, դառնում է միս ու արյուն»:

Բանավոր խոսքի զարգացման, բառակերտման արվեստի ձևավորման յուրահատուկ հնար է նաև բանավեճը: Իմ դասապրոցեսում ես հաճախ եմ կազմակերպում բանավեճեր՝ ստիպելով երեխային նախ մտածել, ապա արտահայտել սեփական տեսակետը։ Դասի թեմային և դրանից բխող խնդրահարույց իրավիճակին համապատասխանող բանավեճն աշակերտի բանավոր խոսքը հարստացնում է վերլուծական–համադրական և տրամաբանական ու ընդհանրացնող լեզվամտածողության շերտերով: Ձևավորվում է աշակերտի խոսքարվեստը։

Մեր կարծիքով՝ բանավեճը մտքի զարգացման և նյութի բազմակողմանի յուրացման կարևորագույն միջոցն է: Այդ ընթացքում աշակերտն արժևորում է սեփական «ես»-ը, գիտակցում ինքնահաստատման անհրաժեշտությունը, ինքն իրեն պարտավորված զգում խոսել ճիշտ, գրագետ լեզվով և զարգացնել հաղորդակցական կարողություններ։ Բանավեճեր կազմակերպում ենք հատկապես այն բնագրերի շուրջ, որոնցում աշակերտները փորձում են բնութագրել հերոսներին՝ արտահայտելով սեփական կարծիքները, և զարգացնում կապակցված խոսք կառուցելու կարողություններ։

Բառապաշարի հարստացմանը մեծապես նպաստում են նաև տարաբնույթ դիտումները, որոնց ներկայացվում են հետևյալ պահանջները.

- Դիտարկումները պետք է հետաքրքրել երեխաներին.
- Դիտումների ժամանակ պետք չէ երեխաների ուշադրությունը ծանրաբեռնել ավելորդ մանրամասների վրա։ Սա կարող է երեխային շեղել գլխավորը նկատելուց ու շուտ հոգնեցնել։
- Դիտարկումների ժամանակ ապահովել երեխաների ընկալման ակտիվությունը, ուսուցիչը բացատրում է, հարցազրույց անցկացնում, իսկ աշակերտները ոչ միայն պատասխանում են, այլև հարցեր տալիս ։Թույլատրվում է ոչ միայն դիտել առարկան,այլև ձեռք տալ,օգտագործել,խաղալ և այլն։
- Երեխաների խոսքի զարգացման նպատակով էքսկուրսիան առավելագույնս օգտագործելու համար անհրաժեշտ է նախապես պլանավորել, որոշել խոսքային այն ձեւերը, որոնք պետք է էքսկուրսիայի ժամանակ ամրացվեն կամ շարադրվեն, հաղորդվել առաջին անգամ։
- Դիտումների և էքսկուրսիաներիթիվը «պետք է մանկավարժներն հիմնավորվի և գտնվի մյուս պարապմունքների հետ համամասնության մեջ»։

Այս օրինակները մանկավարժորեն հիմնավորված են, հենվում են երեխաների զարգացման օրինաչափությունների վրա և չեն կորցրել իրենց արդիականությունն ու նշանակությունը։

Կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացման, խոսքի զարգացման նպատակով օգտագործվում են նաեւ հատուկ թեմատիկ նկարներ աշակերտներին տարաբնույթ հնարներով հանձնարարվում է պատմել այդ նկարների բովանդակությունը։Ընդ որում ոչ թե վերարտադրել այլ ստեղծագործական պատմել՝ օգտագործելով ինչպես ծանոթ, այնպես էլ նոր բառեր, որոնք հաճախ տրվում են նկարին կից մեթոդական կառույցում։

«Այբբենարանում» և մայրենիի ընթերցարան ներում այդպիսի նկարներ շատ կան։ Օրինակ՝ միայն «Ծիտը» վերնագրով նկար-պատմությունից երեխաները կարող են սովորել փուշ, պառավ, թոնիր, քուջուջ անել, հովիվ, գլուխ պահել և այլ բառեր։

Հարուստ բառապաշար և կատարյալ խոսք սովորեցնելը դժվարին և երկարատև աշխատանք պահանջող գործընթաց է։Սակայն տարրական դպրոցի ուսուցիչները

պետք է ձգտեն ծրագրի սահմաններում աշակերտների մեջ ստեղծել այն բավարար հիմքը,որի վրա միջին դպրոցում հնարավոր լինի ավելացնել նոր գիտելիքներ։Բառի շուրջ տարվող աշխատանքը երեխաներին օգնում է բացահայտելու ստեղծագործության իմաստը, գրողի մտքերն ու զգացմունքները, որոնք մարմնավորվում են բառապաշարի հարստությամբ, դարձվածների օգնությամբ, գեղարվեստական յուրաքանչյուր մանրուքի միջոցով: Այդ պատճառով ստեղծագործության լեզվական վերլուծության համար մասնավորապես պետք է ընտրվեն այն բառերը և արտահայտությունները, որոնք օգնում են աշակերտներին ավելի խորությամբ նկարագրելու բնության պատկերները, բացահայտելու հեղինակի զգացմունքները, միաժամանակ ավելի արտահայտիչ և ճշգրիտ կերպով հասկանալու ստեղծագործության իմաստը։

Բառի շուրջ տարվող աշխատանքը երեխաներին օգնում է բացահայտելու ստեղծագործության իմաստը, գրողի մտքերն ու զգացմունքները, որոնք մարմնավորվում են բառապաշարի հարստությամբ, դարձվածների օգնությամբ, գեղարվեստական յուրաքանչյուր մանրուքի միջոցով: Այդ պատճառով ստեղծագործության լեզվական վերլուծության համար մասնավորապես պետք է ընտրվեն այն բառերը և արտահայտությունները, որոնք օգնում են աշակերտներին՝ ավելի խորությամբ նկարագրելու բնության պատկերները, բացահայտելու հեղինակի զգացմունքները, միաժամանակ ավելի արտահայտիչ և ճշգրիտ կերպով հասկանալու ստեղծագործության իմաստը։

Բառի կամ արտահայտության առանձնացումից հետո աշխատանք պետք է տանել դրանց դերը բնագրում գիտակցելու ուղղությամբ, այսինքն՝ պետք է որոշել այն զգացումները, որոնք դրված են բառերի խորքում (ինչո՞ւ է բանաստեղծն այդպես անվանում տարվա այդ եղանակը։ Ինչի՞ մասին է այդ վկայում։ Ի՞նչ է զգում հեղինակը՝ դիտելով այդ տեսարանը)։ Ընտրված բառերի դիպուկությունն ու կարևորությունը գիտակցել տալու համար կարելի է նաև անցկացնել փոքրիկ ոճական ուսումնասիրություն առաջարկելով փոխել հեղինակային բառերը համապատասխան հոմանիշներով։ Այդ աշխատանքը մեթոդապես ճիշտ իրականացնելու համար կարելի է օգտագործել հետևյալ հարցերը. «Ինչպե՞ս կարելի է ասել այլ կերպ, իսկ ավելի լավ, ինչո՞ւ», «Դու ի՞նչ բառեր կօգտագործեիր այդ տեսարանը նկարագրելու համար» և այլն։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, բառապաշարի ակտիվացումը բառային աշխատանքի կարևորագույն ուղղություններից մեկն է, որի պատճառով էլ ուսուցիչը պետք է պարբերաբար նախատեսվի հատուկ առաջադրանքներ՝ հենվելով ընթերցվող նյութերի դիտումների, այն բառերի վրա, որոնք հասկանալու ուղղությամբ հատուկ աշխատանք է տարվել։

Հստակորեն կարող ենք հավաստել, որ ցանկացած ուսումնական գործընթաց, որը հենվում է աշակերտների կարողության վրա, ուր աշակերտը ակտիվ մասնակից է, ոչ թե ունկնդրող, հարստացնում է աշակերտի ակտիվ բառապաշարը։

Հետազոտական աշխատանքի նպատակն էր վեր հանել բառապաշարի հարստացմանն ուղղված քայլերը, ներկայացնել վերոհիշյալ աշխատանքի կարևորությունը, ցույց տալ մի շարք մեթոդներ և մեթոդական հնարներ, որոնց կիրառումը ապահովում բառապաշարի հարստացում նոր բառերով։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս.Գ., «Հայոց լեզու, բառ և խոսք» 2-րդ հատոր 1986թ. էջ 5
2. Աղայան Է.Բ., «Լեզվաբանության ներածություն», Դասագիրք բուհերի համար 3-րդ հատ.,«Միտք»- 1967թ. էջ 202
3. Կարինե Թորոսյան, Կարինե Չիբուխչյան, Աստղիկ Բալայան, «Ինչպես պլանավորել մայրենիի դասը»
4. Պատվական Խաչատրյան, «Հայոց լեզվի տարրական դասընթացի ուսուցման մեթոդիկա», Երևան 2004թ
5. Ջուլիետա Գյուլամիրյան, «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա», Երևան 2006թ.
6. Ջուլիետա Գյուլամիրյան, «Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում», «Լույս» հրտ. -1998թ.
7. Տեր- Գրիգորյան Ա.Ե, «Հայոց լեզվի մեթոդիկա», Ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի համար էջ 417, «Լույս» 1980թ.